



# ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 մարտի 2016 թ.

N 96-Ա

ք. Ստեփանակերտ

### ՀԱՄԱԵՂՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի ՀՕ-44-Ն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**:

1. Հաստատել համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարին՝ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների ֆինանսական ծավալների փոփոխությունը կատարել բյուջետային գործընթացով նախատեսված միջնաժամկետ ծախսային ծրագրի կողմնորոշիչ չափաքանակների և տարեկան բյուջեով նախատեսվող միջոցների շրջանակներում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Հ/Հ | Գործողությունը   | Ժամկետը          | Պատասխանատու                                     | Ֆինանսավորման աղբյուրը      |
|-----|--|------------------|--|-----------------------------|
| 1   | 2  | 3                | 4  | 5                           |
| 1.  | Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման վերաբերյալ իրազեկության բարձրացում (տեղեկատվական արշավների անցկացում և գործողությունների իրականացման արդյունքների լուսաբանում)   | 2016-2022 թթ.    | ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 2.  | ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ում կրթական կարիքների գնահատման բաժինը վերակազմակերպել՝ որպես մանկավարժահոգեբանական աջակցության բաժին (տվյալ բաժնում ներգրավվում են նաև շրջանների բազմամասնագիտական խմբերը) | 2017թ. ընթացքում | ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն | ԼՂՀ պետբյուջե               |

|    |  |                     |  |               |
|----|--|---------------------|--|---------------|
| 3. | Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետների վերապատրաստում ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի և ՀՀ հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետների միջոցով | 2017թ.<br>ընթացքում | ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն | ԼՂՀ պետբյուջե |
| 4. | ԼՂՀ մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ստեղծում  | 2021թ.<br>ընթացքում | ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն | ԼՂՀ պետբյուջե |
| 5. | Ուսհաստատություններում, որտեղ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը յոթից ավել է՝ մտցնել բազմամասնագիտական խմբի հաստիքներ  | 2021թ.<br>ընթացքում | ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն | ԼՂՀ պետբյուջե |
| 6. | Ուսհաստատություններում մտցնել ուսուցչի օգնականի հաստիքներ  | 2022թ.<br>ընթացքում | ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն | ԼՂՀ պետբյուջե |

ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ